

*Ջուրը քշել է ջրաղացը, իսկ մենք չախ-
չախսի հեղինից ենք ընկել:*
Ժողովրդական իմաստություն

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՆՈՐ ԱՏԱՏՈՒՍ-ՔՎՈՅԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ*

Բանալի բառեր – ստատուս-քվո, Ղարաբաղյան հակա-
մարտություն, ռազմավարական սխալ, թուրքական պետու-
թյուն, ինքնութենական գարշապար, մասնատում:

Թեև 2016 թ. ապրիլի սկզբներին տեղի ունեցած արյունալի կռիվներից հետո էլ միջազգային հանրությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիները փնտրում է փոխզիջումների հարթության վրա, իսկ նոր պատերազմին նախապատրաստվող Ադրբեջանը շարունակում է ինտենսիվորեն զինվել, հայկական կողմը 1990-ական թվականներից գրեթե անխաթար մնացած **ստատուս-քվոյի** պահպանման հույսեր է փայփա-
յում:

Այս երեք ցանկությունների համեմատական քննությունը թույլ է տալիս բացահայտել այն հիմնական՝ **ռազմավարական սխալը**, որը համառորեն չենք ցանկանում ուղղել անգամ ապրիլյան դասերից հետո: Այսօրվանից սկսած՝ իբրև Ղարաբաղյան հակամարտության շուրջ ստեղծված նոր իրավիճակի գնահատման բանալի անհրաժեշտ է արձանագրել այն դառը ճշմարտությունը, որ Ադրբեջանը 2016 թ. ապրիլի սկզբներին հասել է մեծ տերությունների շահերի այնպիսի դասավորության, երբ միջազգային աս-
պարեզում առանցքային խաղացողները հավանություն են տվել ղարա-
բաղյան ստատուս-քվոյի փոփոխության անհրաժեշտությանը:

Անշուշտ, դա տեղի է ունեցել ոչ թե ավելի մեծ մարդկային և նյութական ռեսուրսներ ու զինատեսակներ ունենալու կամ ռազմա-քաղաքական շան-
տաժի շնորհիվ, այլ միջազգային-քաղաքական կոնյունկտուրայի փոփոխու-
թյան պատճառով: Բայց քանի որ տարածաշրջանային ստատուս-քվոյի փոփոխությունից բխող ղարաբաղյան ստատուս-քվոյի խարխուլումն արդեն կատարված փաստ է, այսուհետ մեր քաղաքական նախաձեռնությունները պետք է բխեն հենց նման իրողության հստակ ու աներկբա հաշվառումից:

Տարածաշրջանային ստատուս-քվոյի փոփոխությունը, ուղղակիորեն

Ը (ԺԳ) փաթիլ, թիվ 2 (54) ապրիլ-հունիս, 2016
ՎԷՎ համահայկական հանդես

*Ընդունվել է տպագրության 20.06.2016

բխելով Մերձավոր ու Միջին Արևելքում ծավալվող զարգացումները Հարավային Կովկաս տեղափոխվելու իրողությունից, նախ՝ առաջ է բերել միջազգային մեկուսացման մեջ հայտնված Ռուսաստանի սուր անհանգստությունը Արևմուտքի ռազմական ենթակառուցվածքներն իր սահմաններին մոտենալու ու մանավանդ՝ ռուս-թուրքական ռազմաբախում հրահրելու սադրանքից: Ուստի 2016 թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսման ժամկետները համընկել են ՆԱՏՕ-ի գորավարժությունների անվան տակ Վրաստանում ամերիկյան տանկերի հայտնվելու փաստի հետ: Սակայն տարածաշրջանային ստատուս-քվոյի փոփոխության վտանգին Լեռնային Ղարաբաղում իր ռազմական ներկայությամբ հակազդելու Ռուսաստանի ցանկությունը կասեցվել է ոչ թե Ադրբեջանի հատուկ ջոկատայինների ապրիլյան ձախողման, այլև Ղարաբաղյան լայնամասշտաբ պատերազմի հանդեպ մեծ տերությունների դրած ժամանակավոր արգելքի պատճառով: Այս հարցում Վիեննայից մինչև Սանկտ Պետերբուրգ պահպանվող միջազգային կոնսենսուսը հետևանք է այն իրողության, որ Ռուսաստանը առայժմ չի կարողանում, իսկ Արևմուտքը դեռևս չի շտապում անցնել ներքնապես արդեն փլուզված տարածաշրջանային ստատուս-քվոյի ապամոնտաժմանը: Ուստի Ղարաբաղյան հին ստատուս-քվոյի հիման վրա փոխզիջման հասնելը ցանկությունը պարզապես քաղցր խաբկանք է բոլոր նրանց համար, ովքեր չունեն նոր մարտահրավերների հաղթահարման ռազմավարություն և պարզապես ժամանակ են ձգում:

Ղարաբաղյան ստատուս-քվոյի պահպանումը այլևս չի համապատասխանում գերտերությունների հեռահար-ռազմավարական նպատակներին: Նրա երեբուն հարթակի վրա հավասարակշռության հաստատման փորձերը շարունակելու պարագայում առաջիկայում բախվելու ենք նորանոր անակնկալների՝ անկախ նրանից, թե որքանով կառուցողական, իսկ իրականում՝ գիջողական կլիմի Հայաստանի քաղաքականությունը:

Ապրիլի սկզբներից անցած շուրջ երեք ամիսների ընթացքում հայ հասարակության ներսում ու մանավանդ իշխանությունների գործելակերպի մեջ չի նկատվում մեր շուրջը ստեղծված նոր իրողությունների հաշվառումից բխող գործողությունների հետևողականություն: Առաջինը ամբողջովին դեռ չի վերաիմաստավորել տեղի ունեցածը, իսկ երկրորդը ժամանակ է ձգում՝ խարխլված ստատուս-քվոյի պայմաններում իր վերարտադրության խնդիրը լուծելու համար:

Դա ցույց է տալիս, որ մինչ օրս խորությամբ չենք գիտակցել մեր հակառակորդի ապրիլյան հաջողությունների իրական՝ խորքային պատճառը: Ադրբեջանի ռազմավարական նպատակները, դժբախտաբար, տարածաշրջանում ծավալվող գործընթացների հունի մեջ են, իսկ մենք, մնալով հին ստատուս-քվոյի մասին սեփական պատրանքների գերին, ապրիլյան իրադարձություններից հետո էլ համառորեն փորձում ենք թիավարել հոսանքին հակառակ ուղղությամբ:

Մեր հակառակորդին առավելություն է տալիս նաև այն իրողությունը, որ Ադրբեջանն ինքը մի փորձարարական փարսածք է, որն իր ստեղծման պահից՝ 1918 թվականից, ծառայում է իբրև հարթակ փարսածաշրջանային

սրապրուս-քվոյի փոփոխության փարբեր նախագծերի գործարկման համար: Համաթորանականության՝ **երիպթորքական**, համաշխարհային հեղափոխության՝ **բոլշևիկյան**, և այսօր անմիջականորեն նրա շարունակությունը հանդիսացող՝ **Եվրասիական** նախագծերն իրենց բոլոր փարբերություններով հանդերձ՝ հայրվում են «Ադրբեջան» ցարկահարթակի միջոցով Արևելյան Այրկովկասը որպես փարածք գրավելու նպարակադրումի փրոյթում: Չմոռանանք, որ ըստ էության նույնն է նաև «**Եվրասիայի շախմատային փախարակին**» ժամանակին Զ. Բժեզինսկու կողմից Ադրբեջանին հարկացված դերը:

Ուրեմն տարածաշրջանային ստատուս-քվոյի խարխլման պայմաններում Լեռնային Ղարաբաղը և ողջ Հայաստանը մաշելու ու արյունաքամ անելու Ադրբեջանի ռազմավարությունը իրականում բավականին բարդ գլովխկոտորուկ է մեզ համար: Որովհետև ամեն անգամ հակառակորդի հերթական ագրեսիային դիմակայելուն զուգընթաց ստիպված ենք լինելու որոշել, թե որտեղից է գալիս Ադրբեջանով միջնորդավորված հարվածը: Եվ պատահական չէ, որ վերջին «քառօրյայից» հետո մեր քաղաքական միտքն իսկական «ձողվածք» է ստացել մեղավորներ փնտրելով մերթ՝ Թուրքիայում, մերթ՝ Ռուսաստանում, մերթ՝ Արևմուտքում:

Ավելին, թեև ներկա հանգրվանում կողմերի միջև խախտված ռազմատեխնիկական հավասարակշռության վերականգնման խնդրի լուծումը կենաց-մահու հարց է Հայաստանի ու հայ ժողովրդի համար, բայց անգամ նման պարտադիր պայմանի իրականացումն առաջիկայում չի բերելու մեր երկրի ու ժողովրդի վրա կախված սպառնալիքի վերացմանը, իսկ ահա հնարավոր գիշումները միայն ընդլայնելու են թշնամու ռազմական ակտիվության դաշտը:

Ստացվում է, որ իբրև պետություն ու ժողովուրդ այսօր հայտնվել ենք կրկնակի փակուղու առջև

Ա) **մարտավարական** առումով այն դրսևորվում է մեր հանդեպ ռազմատեխնիկական գերակշռություն ձեռք բերած հակառակորդի նոր ոտնձգությունների չեզոքացմանը պատրաստ լինելու խնդրի տեսքով,

Բ) **ռազմավարական** առումով այն դրսևորվում է Ղարաբաղյան նոր ստատուս-քվոյի տեսլականի բացակայության, ուրեմն և նրան հասնելու ուղիների ու հնարավորությունների մասին համակարգված պատկերացումների չգոյության տեսքով:

Մինչդեռ, եթե տարածաշրջանային ստատուս-քվոյի փոփոխության անխուսափելիության գիտակցման հիման վրա չկարողանանք մշակել Ղարաբաղյան նոր ստատուս-քվոյի սեփական տեսլականը և ապա սկսել նրա իրականացման գործը, ռազմավարական հեռանկարում պարտվելու ենք՝ անկախ նրանից, թե քանի անգամ ենք հաղթելու հակառակորդին ռազմի դաշտում կամ դիվանագիտական բանակցությունների սեղանին:

Ուստի այսօրվանից՝ մեզ պարտադրվող պատերազմում հաղթելու հրամայականը պետք է դիտարկենք ոչ միայն իբրև նպատակ, այլև միջոց՝ տարածաշրջանային ստատուս-քվոյի անխուսափելի փոփոխության գործընթացի համատեքստում երկու խնդիր լուծելու համար:

Առաջին՝ ակնհայտ է, որ խարխլված ստատուս-քվոյի հիմքի վրա

պարբերական ցնցումների դատապարտված տարածաշրջանում գոյության կովի հրամայականի առջև կանգնած Հայաստանի ու հայության համար օլիգարխիկ վարչակարգի և արևմտյան ժողովրդավարության երկընտրանքը խոր և անհաղթահարելի փակուղի է, մութ թունել, որից լույսը չի երևում, ուստի առաջիկայում **ազգ-բանակ** դառնալու հրամայականով առաջնորդվող իշխանության ձևավորումից բացի մենք այլ ճանապարհ չունենք:

Երկրորդ՝ քաղաքական ու ռազմատեխնիկական բնույթի առաջնահերթ խնդիրների լուծումից գատ հարկ է լինելու գտնել մեր առավելություններն ու հակառակորդի խոցելի կողմերը ներառող այն հիմնական մրցահարթակը, որտեղ ռազմավարական հեռանկարում հնարավոր է ոչ միայն պարտության մատնել Ադրբեջանին, այլև խոցել հակառակորդի իրական և ոչ թե թվացյալ **գարշապարը** և անգոր դարձնել նրան՝ Ղարաբաղի ճակատագիրը վիճարկելու իր հետագա նկրտումների մեջ:

Պատճառն ակնհայտ է. թշնամուն ռազմական նոր պարտության մատնելու և անգամ նրա տարածքները զգալիորեն կրճատելու դեպքում էլ մենք չենք կարողանալու կոտրել Ղարաբաղի ճակատագիրը վիճարկելու՝ Ադրբեջանի վճռականությունը, իսկ ասիա «Բաքուն գրավելու» երազանքը ներկա պայմաններում մեզ ոչ ոք թույլ չի տա իրականություն դարձնել: Որովհետև իր բնակչությամբ ու բնական հարստություններով մեզ գերազանցող Ադրբեջանի որդեգրած՝ Հայաստանը դանդաղորեն մաշելու և աշխարհի քարտեզից ջնջելու ծրագիրը իրականում սեփական «շարադրությունը» չէ: Հայոց ազգային նպատակներն ու ձգտումները կաշկանդված պահելով մեր արևելյան սահմանների վրա՝ գործառնական առումով Ադրբեջանն իրականացնում է սոսկ Թուրքիային Հայոց ցեղասպանության համար պատասխանատվությունից զերծ պահելու և միաժամանակ Հայաստանի արևելյան մասում նույնը կրկնելու գործառույթը: Իսկ սա նշանակում է, որ Ղարաբաղի հարցն այլևս հայ ժողովրդի մի հատվածի ինքնորոշման ու անկաշկանդ զարգացման խնդիրը չէ, այլ հայրենի հողի վրա Հայոց պետականության հետագա գոյության խնդիր, որը կմնա որպես այդպիսին՝ այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի «Ադրբեջան» կոչվող **թուրքական պետությունը**:

Մրանից, անշուշտ, չի հետևում, թե մենք ժխտում ենք մեր հարևան երկրի ու նրա քաղաքացիների գոյության իրավունքը: Քավ լիցի. ո՛չ ֆիզիկական և ո՛չ էլ մշակութային-քաղաքակրթական առումներով հայերը չեն հավակնում ներկայիս Ադրբեջանի ողջ տարածքին: Իր ամբողջության մեջ դա մերը չէ, բայց միաժամանակ նաև թուրք-ադրբեջանցիներինը չէ: Ավելին, Ադրբեջան կոչվող նորագոյացությունը Հայաստանից բացի տարածքային խնդիրներ ունի իր մյուս երեք հարևանների՝ Վրաստանի, Ռուսաստանի Դաշնության և, իհարկե, Իրանի հետ: Եվ այժմ վրա է հասել այն պահը, երբ այդ նորագոյացության ղեկավարությանը համոզել են, թե իբր Հայաստանն ու Արցախը այնքան թույլ են, որ աշխարհաքաղաքական տեղաշարժերի որոշակի հանգրվանում հնարավոր է իրականացնել Հարավային Կովկասից հայերին դուրս մղելու և տարածաշրջանին տիրանալու ծրագիրը: Անշուշտ, առաջիկայում մեզ պարտադրվելիք նոր պատե-

րագւնը ժամանակավորապես ի դերն է հանելու այդ հույսերը: Բայց որոշ ժամանակ անց դրանք նորից են ծագելու, քանի որ այդպիսին է «Ադրբեջան» նորագոյացության «ծրագրային կողը»: Իրականում այն հիմնված է ոչ թե առանձին՝ «ադրբեջանական» ազգային ինքնության, այլ այլոց հայրենիքները զավթելու ընդհանուր թուրքական նպատակադրումի վրա: Քանզի որքան էլ ադրբեջանցիներն ասպատակեն տարածաշրջանի ու նրանում բնակվող բնիկ ժողովուրդների հարուստ պատմությունը, նրանք չեն կարող թաքցնել այն իրողությունը, որ իրենք՝ որպես ժողովուրդ, այսօր էլ փաստորեն գուրկ են առանձին ինքնությունից: Քանզի նրանց զբաղեցրած տարածքներում վերջին հարյուրամյակի ընթացքում հաջորդաբար բեմականացված համաթուրանականությունը, բոլշևիզմը, սիոնիզմը կամ եվրասիականության կեղծ ռուսական՝ համադրույթը սոսկ Արևելյան Այսրկովկասի ասպատակման միջոցներ են և ոչ ավելին:

Ուրեմն Հարավային Կովկասում Ադրբեջանը Հայաստանի «երկվորյակը» դարձնելու թուրքական ծրագիր-նախագիծը խոցելի է առաջին հերթին **ինքնութենական** հարթության վրա: Նման ծավալապաշտական նկրտումները հակասում են նույնիսկ Ռուսաստանին համակած ժամանակավոր եվրասիական տրենդին, որում Ադրբեջանին վերապահված է ոչ թե համաթուրքական, այլ ռուս-իրանական կամուրջի դերը՝ դրանից բխող համապատասխան քաղաքակրթական դիմագծով: Ուստի հաշվի առնելով այն իրողությունը, որ իրենց ինքնությանը հավատարիմ մնացած Ադրբեջանի բնիկ ժողովուրդներից լեզգիներն ու ավարները բաժանված են Ադրբեջանի ու Ռուսաստանի, իսկ թալիշներն ու թաթերը՝ Ադրբեջանի և Իրանի միջև՝ մենք պետք է ընդմիջտ մոռանանք մեզ մատուցվող «քիլվայական» կարծրատիպերը և գիտակցենք, որ քանի դեռ Ադրբեջանն ու ադրբեջանցիները պահպանում են 100 տարի շարունակ հետևողականորեն իրենց ներարկված թուրքական ինքնությունը, մեր միջև հաշտություն չի լինելու:

Մշտական հարցականի տակ պահելով Հայաստանի ու հայության անվտանգ գոյատևման և անկաշկանդ զարգացման հեռանկարը՝ Ադրբեջանը նոր պարտությունների դեպքում անգամ իրականացնելու է մեզ թուլացնելու և քայքայելու իր գործառույթը մինչև այն պահը, երբ ի վիճակի կլինենք խոցել նրա **ինքնութենական գարշապարը**, խնդիր, որը դեռևս խորությամբ չի գիտակցվում հայ քաղաքական մտքի կողմից: Մինչդեռ Ադրբեջանն իրենց հաղորդակցական համակարգերը միավորող անվտանգ տարածք դարձնելու ռուս-իրանական ծրագրերը՝ մի կողմից և տարածաշրջանի քարտեզը ֆրագմենտացնելու նպատակ ունեցող արևմտյան ռազմավարությունը՝ մյուս կողմից, հատվում են մեկ կետում՝ խայտաբղետ էթնիկական ծագում ունեցող ներկա Ադրբեջանի միասնական-թուրքական ինքնության բացասման տիրություն: Հենց դրա վրա էլ պարտավոր ենք կառուցել դարաբաղյան նոր ստատուս-քվոյի մեր ազգային տեսլականը՝

1 «Վէմ»ի հաջորդ համարում հրապարակվելու համար պատրաստ՝ ռուս մեծ մտածող **Նիկոլայ Բերդյաևի** «Եվրասիականները» հոդված-մարզաբեությունը առարկայական փաստերով ցույց է տալու, որ իրականում եվրասիականությունն իբրև գաղափարախոսություն ու արժեհամակարգ խորթ և օտար է քրիստոնյա ու աստվածավախ ռուս ժողովրդի համար: Խմբ.:

հայկական զորքերի առաջխաղացման ամենահարմար պահին բազմազգ Ադրբեջանը ներքնապես «պայթեցնելու» խնդիրը դիտարկելով որպես ռազմավարական նպատակ:

Նման առաջադրանքի իրականացումը առաջիկա տարիներին մեզանից պահանջելու է համառ ու տքնաջան աշխատանք, նախ՝ Հայաստանը դինամիկ կերպով զարգացող ու միաժամանակ իրեն պաշտպանելու ունակ պետության վերածելու և ապա՝ տարածաշրջանային ստատուս-քվոյի անխուսափելի փոփոխության գործընթացում Ադրբեջանի կոտորակումն ու մասնատումը իրականություն դարձնելու համար:

Խմբ.:

NEW VISION OF KARABAKH STATUS QUO

Editorial

Key words – status quo, Karabakh conflict, a strategic mistake, Turkish state, the Achilles' heel of identity, fragmentation

НОВОЕ ВИДЕНИЕ КАРАБАХСКОГО СТАТУСА-КВО

Редакторская статья

Ключевые слова – статус-кво, карабахский конфликт, стратегическая ошибка, турецкое государство, ахиллесова пята идентичности, фрагментация